Նոտարական ակտի կոդ: 570-20170301-117-1019963
Նոտարական ակտի գաղտնագիր: KY7OC9

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

**19.03.2009թ. կնքված, սեղանամատյանում թիվ 593-ով գրանցված վարձակալության պայմանագրով 2017թ. Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի վերաբերյալ**

ՀՀ Արարատի մարզ քաղաք Մասիս երկու հազար տասնյոթ թվականի մարտի մեկ

Մի կողմից, ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքը, ի դեմս համայնքի ղեկավարի լիազորված անձ **Անահիտ Արարատի Առուստամյանի,** ծնված՝ 09.05. 1991թվականին, անձնագիր AH0395568 , տրված 25/06/2007թվականին 044-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ Արարատի մարզի Խաչփար գյուղի 7-րդ փողոցի 25 տանը (լիազորագիրը վավերացված է երկու հազար տասնյոթ թվականի մարտի մեկին ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի ղեկավարի կողմից), այսուհետ՝ <<ԿՈՂՄ-1>>, մյուս կողմից Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեն, լիազորված անձ Հովիկ Հայդուկի Սարգսյանի, ծնված՝ 22/07/1967թվականին, անձնագիր AP0654236, տրված 10/01/2017թվականին 044-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի 2-րդ փողոցի 58 տանը, N1/18-2/62 14-17 լիազորագիրը վավերացված է 27/02/2017թ.-ին, այսուհետ՝ <<ԿՈՂՄ-2>>, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 19.03.2009թ. կնքած, սեղանամատյանում թիվ 593 գրանցված վարձակալության պայմանագրի /այսուհետ Պայմանագիր/ 3.2 կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1 Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով ՝ կողմերը որոշեցին

1.1 Հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը ՝ համաձայն հավելված 1-ի:

1.2 Սույն համաձայնագրով նախատեսված պայմանները տարածել կողմերի միջև 2017թ. հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

## 2. Այլ պայմաններ

2.1 Պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, 4(չորս) հավասարազոր օրինակից և տրվում են կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2.4 Սույն համաձայնագրի հավելված 1-ը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը:

**<<ԿՈՂՄ-1>>**
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔ
լիազորված անձ
ԱՆԱՀԻՏ ԱՐԱՐԱՏԻ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

ՀՎՀՀ 03801428
Հ/Հ 900435101077
Կենտրոնական գանձապետարան
Գործառնական վարչություն

**<<ԿՈՂՄ-2>>**
Հայաստանի Հանրապետություն , ի դեմս ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեն
լիազորված անձ
ՀՈՎԻԿ ՀԱՅԴՈՒԿԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900411001952
Կենտրոնական գանձապետարան
Գործառնական վարչություն

Հավելված 1

19.03.2009թ. կնքված, սեղանամատյանում թիվ 593-ով գրանցված վարձակալության պայմանագրով 2017թ. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց

## Վճարման ժամանակացույց*

ՀՀ դրամ

| N | Աշխատանքի Անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2017թ. պետական բյուջետային միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | Ընդամենը՝ տարին |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1. | ՀՀ Մասիսի քաղաքապետարանի հասցեում գտնվող վարչական շենքի 130.13քմ տարածքի վարձակալության ծառայություն | 66000 | 99000 | 132000 | 165000 | 198000 | 231000 | 264000 | 297000 | 330000 | 363000 | 396 000 | 396 000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

<<ԿՈՂՄ 1>>
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ
համայնք
լիազորված անձ

ԱՆԱՀԻՏ ԱՐԱՐԱՏԻ [illegible]

ՀՎՀՀ 03801428 Հ/Հ 900435101077
Կենտրոնական գանձապետարան
Գործառնական վարչություն

<<ԿՈՂՄ 2>>
Հայաստանի Հանրապետությունը ի դեմս ՀՀ
կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի
լիազորված անձ

[illegible]

ՀՎՀՀ 02647057 Հ/Հ 900411001952
Կենտրոնական գանձապետարան Գործառնական վարչություն

երկու հազար տասնյոթ թվականի մարտի մեկ

Սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ ՄԱՍԻՍ նոտարական տարածքի նոտար Հերիքնազ Մամիկոնի Ղարիբյանի կողմից։
Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ Համաձայնագիրը ստորագրած իրավաբանական անձանց ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձանց իրավունակությունը, նրանց ներկայացուցիչների լիազորությունները և գործունակությունը ստուգված են։

Գրանցված է սեղանամատյանում թիվ 449-ով

Գանձված է պետական տուրք երկու հազար դրամ և ծառայության վճար վեց հազար դրամ համաձայն՝ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների։

Նոտար Հերիքնազ Մամիկոնի Ղարիբյան

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է Մ.Խորենացու 3,7 հասցեում, ստորև ներկայացնում է 593 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի արդյունքում 2009թ-ի մարտի 19-ին կնքված պայմանագրում 2017թ-ի մարտի 6-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ 1: 2017թ-ին մատուցվելիք ծառայության դիմաց նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն: Հաստատվել է վճարման ժամանակացույց:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 10.02.2011թ-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգով սահմանված պայմաններին համապատասխան՝ հիմք ընդունելով 19.03.2009թ-ի թիվ 593 պայմանագրի 3.1 կետը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Քնարիկ Ջուլհակյան:

Հեռախոս՝ 060 544 703:

Էլ. փոստ՝ knar_julhakyan@taxservice.am:

Պատվիրատու՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե